

## ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ ԱՂՑՔԻՑ

### Աշուր Մանուչարյան

Արագածոտնի մարզի Աղջք գյուղը հայտնի է Արշակունի թագավորների (52-428) դամբարանով: Այն կառուցվել է, ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, 364 թ. Բարձր Հայքի Դարանաղաց գավառի նշանավոր Հանի-Կամախի ամրոցում պարսիկների կողմից Արշակունիների դամբարանի ավերումից անմիջապես հետո, երբ Վասակ Մամիկոնյան սպարապետը, հայոց արքաների ոսկորները խլելով թշնամուց, բերեց Միջնաշխարհ՝ արքունական Այրարատում վերստին ամփոփելու համար<sup>1</sup>:

Հայ ճարտարապետության ուսումնասիրության երախտավոր Թ. Թորամանյանը նշում է, որ Բյուրականի մոտ անառիկ դիրքի վրա գտնվող Աղջ (Հախս) փոքր գյուղի տարածքում դեռևս ուրարտական ժամանակներից կառուցվել են ամրոցներ: Բայց «այստեղ է այն վերին աստիճան հետաքրքրական Արշակունյաց ստորերկրյա կամարակապ դամբարանը, որուն մեջ հատուկ շինված տապաններու ճակատին քանդակված են հայոց հնագույն շրջանին հատուկ քանդակներ»<sup>2</sup>: Քրիստոնեական վաղ ժամանակների զարդաքանդակներով (առյուծ, շուն, եղջերու, վարազ, այծյամ, ցուլ և այլն), ինչպես ականարկում է հնագետ Գ. Կարախանյանը, ծածկված են արևմտյան մուտքի երկու կողմերի և ուղղանկյուն խորշերի ճակատների քարերը<sup>3</sup>:

Վիմագրագետ Ալ. Մանուչարյանը վերը թվարկվածներին հավելում է աղվեսի և թռչնի պատկերները հարավային պատին, որոնք խաղողի ողկույզ են ուսում<sup>4</sup>, իսկ մյուս կողմում Դանիելի ավանդական քանդակն է՝ առյուծների գուբում<sup>5</sup> (Դանիել Զ. 16-23):

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 224-225:

<sup>2</sup> Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, II ժողովածու, Երևան, 1948, էջ 112: Ճարտարապետ գիտնականը, հաջորդ՝ էջ 113-ում, ներկայացնում է ստորգետնյա դամբարանի հատակագիծն ու կտրվածքը:

<sup>3</sup> Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. I, Երևան, 1974, էջ 266:

<sup>4</sup> Հ. Սիմոնյանը վաղքրիստոնեական շրջանակված հավասարաթև խաչի հորիզոնական թևերին պատկերված երկու թռչունները և խաղողի ողկույզ կտցահարող ևս մեկը՝ աղավնիների հարևանությամբ (Սուրբ Հոգու խորհրդանիշ), իսկ վերջինից ներքև որթի տերև ուտող աղվեսը կամ այծյամը կամ էլ (տգիտության խորհրդանիշ) դիտարկելով, իմաստային նոր մեկնություն է տալիս հարավային պատի այդ հարթաքանդակներին, ըստ որի, աղավնիները՝ քրիստոնյաները, ճաշակում են հասուն խաղողը՝ աստվածային վայելքը, իսկ դար-

Հնագետ Հ. Միմոնյանը առանձնապես տպավորիչ է համարում դամբարանի մուտքը եզերող սյուներից աջակողմյանի ներքնամասում արված քանդակը, որտեղ պատկերված է եղջերվի մեջքին ցատկած առյուծ և ըստ Բ. Առաքելյանի մեկնաբանում, որ «առյուծի հարձակումը ցլի կամ եղնիկի (եղջերվի - Հ. Ս.) վրա հայ հեթանոսական հավատալիքներում խորհրդանշում է օրացուցային նշանավոր երևույթներից մեկը՝ նոր տարվա սկիզբը և գարնանային օրահավասարը, հետևաբար՝ նաև մահվան ու վերածննդի գաղափարը»<sup>2</sup>: Այն նաև լուսի հաղթանակն է խավարի նկատմամբ, իսկ ըստ միհրականության՝ երկրային արարչագործության սկիզբը: Լուսի և խավարի տիեզերական հավիտենական պայքարի այլաբանական արտացոլում կա նաև հարավային պատի արևմտյան մասում պատկերված նիզակի հուժկու հարվածով վարազ (խորհրդանշում է խավար աստղը երկնակամարում) շամիրող հսկա որսորդ Հայկ-Օրիոնի և նրա երկու օգնական շների դիցաբանական որսի տեսարանում<sup>3</sup>:

Ալ. Մանուչարյանը Աղցքի դամբարանի կառուցվածքային և հորինվածքային առանձնահատկությունների մեջ կարևորում է նրա խաչաձև հատակագիծը, որի ակունքները հայ ճարտարապետության մեջ իրենց սկիզբն են առնում IV դարից կամ ավելի վաղ ժամանակներից: Ըստ վիմագրագետի՝ այդ հորինվածքը մեծ դեր խաղաց քրիստոնեական պաշտամունքային շինության կերպարի ձևավորման գործում, քանզի քրիստոնեության վաղ շրջանում ամենատարածված պաշտամունքը ննջեցյալների հիշատակն էր, և եկեղեցին ու վկայարանն ունեցել են ծեսի նույնիմաստ սկզբունքներ<sup>4</sup>:

Ա. Սահինյանի կարծիքով, ներկա դամբարանը երբեմնի երկհարկանի շինության ստորին պահպանված մասն է միայն<sup>5</sup>:

Ալ. Մանուչարյանը Աղցքի դամբարանի վերաբերյալ ներկայացնում է այլ կարծիքներ ևս: Մասնավորապես, Ն. Տոկարսկին գտնում է, որ այն իր կառուցվածքով նման է Միջլեայի (Սիրիա) դամբարանին: Դրանք համարյա միաժամանակյա շինություններ են և դժվար է ասել՝ որն է նմանեցված որին<sup>6</sup>: Բոլոր

ծի չեկաձևերը, որոնք մարմնավորվում են էշի կերպարանքում, կերակրվում են դառը տերևով (տե՛ս Հակոբ Միմոնյան, Աղցքի արքայական դամբարանի հուշարձանախումբը (IX-XVII դդ.), «Հուշարձան», Է, Երևան, 2011, էջ 24):

<sup>1</sup> Ալ. Մանուչարյան, Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի, Ե.1977, էջ 45:

<sup>2</sup> Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 23:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>4</sup> Ալ. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 46:

<sup>5</sup> «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» (Ա. Սահինյան, Կ. Հովհաննիսյան, Լ. Բաբայան), Երևան, 1964, էջ 90:

<sup>6</sup> Н. Токарский, Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961, стр. 73.

դեպքերում Աղցքի դամբարանը կառուցվել է Անի-Կամախի պանթեոնի ավերման պատճառով և, հավանական է, նրա նմանությամբ<sup>1</sup>, որովհետև այդ էին պապահանջում ավանդական նկատառումները, իսկ Անի-Կամախի Արշակունյանց դամբարանը շատ ավելի վաղ ժամանակներում էր կառուցվել<sup>2</sup>:

Մեր կարծիքով, այստեղ աչքաթող է արվում այն կարևորագույն հանգամանքը, որ Աղցքի դամբարանը խաչաձև հատակագծով կառուցվել է արդեն քրիստոնեության դարաշրջանում, իսկ դրա նախատիպ շինությունը Հանի-Կամախիում, որտեղ գտնվում էր հեթանոս հայերի գերագույն աստուծո՝ Արամազդի նշանավոր մեհյանը, պիտի որ կրեր հայ նախաքրիստոնեական ճարտարապետության առանցքային տարրերը:

Չի բացառվում, որ Աղցքում նախապես, մինչև 364 թ. ամփոփված է եղել Արշակունի թագավալներից մեկի մարմինը: Այդ մասին պատմական աղբյուրները լռում են: Բայց անհավանական չէ նախնական հանգստարանը մշտական դամբարանի ծավալվելու տրամաբանությունը, որը կարող էր գործել միայն Աղցքում, այլ ոչ այլուր: Աղցքից ոչ հեռու ապրել է Տիրան Արշակունի Հայոց թագավորը (338-350), որը, ինչպես հաղորդում է պատմահայրը, պարսիկների կողմից գերեվարվելուց ու կուրացվելուց հետո 350 թ. վերադառնում է Հայաստան, գահը փոխանցում որդուն՝ Արշակ Բ-ին (350-368), և այդպիսով հեռանալով պետական գործերից, հաստատվում է արքունական կալվածքներից մեկում Կոռա (Կոռ-Ա. Մ.) ավանում, որտեղ էլ թաղվում է՝ չարժանանալով իր հայրերի գերեզմանին (Հանի-Կամախիում-Ա. Մ.)՝ Դանիել կաթողիկոսին սպանելու համար<sup>3</sup> (նաև Հուսիկ Պարթև հայրապետի նահատակության պատճառով-Ա. Մ.):

Դամբարանի տարածքը զերծ չէ արձանագրությունների գոյությունից, որոնցից, սակայն, միայն բեկորներ են մեզ հասել:

1. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԵԿՈՐ, 4 տող.  
ԹՈՒԻՒՆՆԵՐ / ՈՇԷ: (1208) / ԿԱՆԳՆԵՑԱԻՄԲ  
ՆՇԱՆՆՍ Ի ԲԱՐԵԽ / ԱՒՍՈՒԹԻ  
Վ՛ ԱՐԱՊԵՏԻՆՆԵՐ:

Հրատ. Հ. Սիմոնյան, 8  
(թվականը՝ ՈՇԸ՝ 1209):



<sup>1</sup> Ա. Սահինյան, Քասախի բազիլիկայի ճարտարապետություն, Երևան, 1955, էջ 196-197:  
<sup>2</sup> Ալ. Մանուչարյան, նշվ. աշխ., նույն տեղում:  
<sup>3</sup> Մովսիս Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 283:

**Ծանոթություն.** Անտարակույս, խաչքարի բեկոր է: Անունը պայմանականորեն վերականգնել ենք ԿԱՐԱՊԵՏ, քանի որ չորրորդ տողի վերջնամասում պահպանվել է Կ տառի ձախ սյունագիծը:

2. ՎԻՄԱԳԻՐ ԲԵԿՈՐ, 2 տող.

ԱՂ  
ՈՒՆԱՂՍ

ՅՆԱՂԱԽԹԱ / ՏՊՈՒՆ.  
ՍՊԱՍԱ ԻՈՐՔ<sup>1</sup>...

**Ծանոթություն.** Հավանական վերականգնումը կատարվել է ըստ առկա տառերի: Սպասավորները հնարավոր է եղած լինեն դամբարանի մոտակայքում գտնված եկեղեցու հոգևորականներ: Թ. Թորամանյանը այդ եկեղեցին, ելնելով նրա փլատակների մնացորդներից, թվագրում է V դարով<sup>1</sup>: Իսկ արձանագրության առկա տառաձևերը հիմնականում բնորոշ են X-XI դդ. բոլորաձև երկաթագրին:

Հ. Սիմոնյանը և Վ. Գրիգորյանը, եկեղեցու հիմնադրման հարցում հետևելով Գ. Հովսեփյանին և Մ. Հասրաթյանին, այն համարում են IV դ. շինություն և հստակեցնում, որ կառուցվել է այդ դարի առաջին կեսին<sup>2</sup>: Այն եղել է վանական եկեղեցի. 606 թ. հիշատակվում է Աղցքի Միքայել վանահայրը<sup>3</sup>: Բացաված չէ, որ այդ վանքից սկսված լինի Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի (613-628) հոգևոր գործունեությունը

3. ԲԵԿՈՐ, 5 տող.

ԹԻ  
ՂԻՍԸՏԻ  
ԳԲ Ի  
ԿԱՐԱՊԵՏԱԲԵՅԻՆԻ  
ԱՆՈՒԹԵՎԻԱԶԱՆՍՍԿԻ  
.....

ԹԻԼԻՆ // :ՁԽԸ: (1299)-Ն ԷՐ / ԳՐԻ-  
ԳՈՐՈՅՊ / ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵՒ ԵՒ  
ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԽԱԶԱՆԱ  
ՍԱՀՄԱՆԵՑԱԻ...

Հրատ. Հ. Սիմոնյան, 8:

<sup>1</sup> Թ. Թորամանյան, Նյութեր ..., էջ 112:  
<sup>2</sup> Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 12-13:  
<sup>3</sup> Նույն տեղում, էջ 7:

**Ծանոթություն.** Պահպանված թվականը, ինչպես նաև երրորդ տողի ԳՐ տառահետքերը դյուրացնում են կաթողիկոսի անվան վերականգնումը, որ է՝ Գրիգոր Է Անավարզեցի (1293-1307): Վերջինս կաթողիկոսների հետ միարարություն ջերմ կողմնակիցն էր և ընդհանուր քրիստոնեական միություն գաղափարի իրագործման համար պատրաստ էր զոհել հայ եկեղեցու որոշ ավանդություններ: Կաթողիկոս օծվելուց անմիջապես հետո նրա առաջին գործը եղավ հայրապետական աթոռը Եգիպտոսի մամլուքների կողմից 1292 թ. ավերված Հռոմկլայից Կիլիկիայի մայրաքաղաք Սիս տեղափոխելը<sup>1</sup>:

Խազանը մոնղոլ իլխան Ղազան Մահմուդ խանն է (1295-1304), ով հայտնի է իր դրամական, հարկային, վարչական, հողային բարեփոխումներով:

Իսկ որպես տեղական իշխանավոր պետք է հանդես գար Զաքարյան տոհմի ներկայացուցիչ: Արձանագրություններից հայտնի է, որ Արագածոտն պատմական գավառի տարբեր վայրերում և հարևան երկրամասերում տվյալ ժամանակաշրջանում իշխում էր Իվանե Բ Զաքարյանի (1261-1263) որդին Աղբուղան (Դաշտաղեմ, Կոշ, Փարպի, Աշտարակ, ինչպես նաև Վաղարշապատում, Անիում եղբայրների՝ իշխանաց իշխան Շահանշահ Բ-ի և աթաբեկ Զազայի հետ): Իսկ Արուճում պարոնն էր Իվանե Բ-ի եղբայր, սպասալար Մխարրթեղը, Ուշիում մյուս եղբայր Ավագ Սարգիսը<sup>2</sup>:

Իվանե Բ-ն, համաձայն Սաղմոսավանքի ս. Սիոն եկեղեցու Վաչե Բ Վաչուտյանի անթվակիր արձանագրության, հանդիսանում էր Ամբերդ գավառի սեփական տերը<sup>3</sup>:

Այդ գավառը, ինչպես նույն բնագիրն է հայտնում, Վաչե Ա-ն (Ամբերդեցին) գնել էր մեծ ամիրսպասալար Զաքարեից, բայց այն նորից անցել էր Զաքարյաններին, հավանաբար Քուրդ Ա Մեծ Վաչուտյանից (1235-1267) հետո: Հարկ է նշել, որ Քուրդ Բ Ամբերդեցին XIV դ. սկզբներին վերականգնում է Վաչուտյանների ավատական իրավունքները, և ահա Կարբիի զանգակատան

<sup>1</sup> Տե՛ս «Հայ եկեղեցու պատմություն», Մասն Ա, աշխատասիրությամբ **Եզնիկ եպս. Պետրոսյանի**, ս. Էջմիածին, 2002, էջ 162:

<sup>2</sup> Տե՛ս «Վիմական տարեգիր», ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց **Կ. Կոստանեանց**, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 99, 107, 110-111, 138, 149, 151, 159, 161, 162, 165: **Գ. Կարախանյան**, Դսեղի միջնադարյան ձիթհանը և նրա շինարարական արձանագրությունը, ՊԲՀ, Ե., 1977, 4, էջ 251: **Կ. Մաթևոսյան**, Արուճ, Երևան, 1987, էջ 61: **Ֆ. Բաբայան, Ա. Քալանթարյան**, Ուշիի ս. Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, ՊԲՀ, 2001, 2, էջ 186-187:

<sup>3</sup> Տե՛ս արձանագրությունը **Հ. Եղիազարյան**, Սաղմոսավանք, «Էջմիածին», 1961, № 6, էջ 43:

1338 թ. վիմագրում նրա որդի Թեոդորոս Զրքինը հիշատակվում է որպես «տէր Ամբերդոյ գաւառիս»<sup>1</sup>:

4. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԵԿՈՐ, 5 տող, ընթեռնելին՝ 3.

ՈՉ ՈՐ  
ԹԱԳՈՒՏ  
ՈՐԱՂՈՒ

ՈՉ ... ՈՐ ... / ԹԱԳՈՒՒ Տ՛ԻԿԻՆ՝ / ... ,  
... ՈՐ ՄՂՈՒՄԻ՝ ? ...

Ծանոթություն. Կարծում ենք, որ այստեղ Թագուհին անձնանուն է: Այն, ըստ վիմագրերի, առավել տարածված է եղել XIII դ. II կեսին: ԹԱԳՈՒ անվանը հաջորդող Տ տառը հուշում է, որ պիտի հետևի «ՏԻԿԻՆ» բառը, ինչը ենթադրում է կնոջ ազնվազարմ լինելը:

Ա Ա Ր Յ Ն Ս  
Գ Ե Մ Շ Ո Ր Ի Ն  
Բ Գ Բ Է Բ Յ Ո Ւ Մ  
Վ Ա Է Ս Հ Ա Յ  
Ո Ւ Ա Ղ Ա Բ Ա Բ

5. ԲԵԿՈՐ, 5 տող (եղծված).

...Ա (1) ԱԻՐ ՅԱՆԱ... / :Գ: (3) ԺԱՄ ՇՈԹԻՆ... / ՈՔ  
ԳՆԷՔ, ՅՈՒԴ՝ԱՅԻ ԲԱԺԻՆ ԵՂԻՑԻՔ՝... /  
ՎԱՆ՝Ա՛ՀԱՅՐ՝... /  
ՈՒ ԱՂԱԲԱԲ:

Ծանոթություն. Նվիրատվական արձանագրության մաս է: Թվագրվում է XIII-XIV դդ.:

6. ԲԵԿՈՐ, 5 տող, (եղծված), նշմարելին՝ 4.

ՅԱԼԸ  
ՀԻՆ ԱՅԶԷ  
Ե Չ Մ Դ Ի Դ Ի  
Ա Փ Վ Վ Յ Կ Մ Բ Ա Մ

...ՅԻՄ ԸՆ՝ՉԻՑ՝ / ՅԻՆԱՆՑ ՀՆ... / ԵԻ ԶԱՐԴՆ  
ՊԻ՝ՏԱՆԻ՝... / ԱՆԽԱՓԱՆ: ՎԱՆԱԿԱՆՔ  
ԱՏ՛ԵԱՆԻ՝...

<sup>1</sup> Տ. Պետրոսյանց, Վաչուտյաններ, Երևան, 2001, էջ 94:

**Ծանոթություն.** Նույնպես նվիրատվական արձանագրության հատված է: Ընծայատուն Հինանց՝ Հոգեգալուստի, Պենտեկոստեի տոնի առթիվ եկեղեցուն նվիրատվություն է կատարել այդ թվում նաև՝ պետքական զարդ, ինչի դիմաց ս. ուխտի միաբանները պարտավորվել են նվիրատուի նախընտրած օրը, կախված նվիրատվության արժեքից, համապատասխան թվով պատարագաժամեր կատարել անխափան:

Արձանագրությունը XV-XVI դդ. է:

7. ԽԱԶԲԱՐԻ ՀԱՏՎԱԾ, ներքնամասում 7 տող (եղծված).

ՂԾ  
Ձ  
ԲԿԶ  
ՀԱՅԻՑ  
ՓՈՐԱՄ  
ՀԱՀԱ  
Ա

ԱԾ ԹՎԻՆ // ՌԿԶ (1617) / ՀԱՅՈՑ / ՓՈՐԱՄ / ՇԱՀԱՆ / ԱՄԷՆ:

**Ծանոթություն.** Հինգերորդ տողի ՓՈՐԱՄ-ը «փորել» բառի առաջին դեմքի եզակի թվի բարբառային ձև է: Այն պետք է հասկանալ «փորեցի», «քանդակեցի»:

8. ԲԵԿՈՐ, ջարդոտված, արաբատառ, ելնդագիր, 6 տող:

ك  
س  
منارة  
١٨  
مرقد من طاب  
حوم راحيم

هوحي و لا يموت  
.....سليمان.....  
منارة الله على قبره  
..... ١٨ .....  
مرقد من طاب ثراه  
حوم راحيم

**Թարգմանություն** (ըստ վերականգնված տողերի).

- 1. ՆԱ ԿԵՆԴԱՆԻ Է ԵՒ՝ ՁԻ ՄԵՌՆՈՒՄ՝
- 2. .... ՄՈՒԼԵՅՄԱՆ՝ .....

3. <sup>1</sup>ԱԼԼԱՀԻ<sup>1</sup> ԼՈՒՅՍԸ<sup>1</sup> ԼԻՆԻ ՆՐԱ ՇԻՐԻՄԻ ՎՐԱ<sup>1</sup>

4. .... 18 .....

5. ԹՈՂ <sup>1</sup>ՀՈՂԸ ԹԵԹԵԻ ԼԻՆԻ<sup>1</sup> ՆՆՋԱՐԱՆԻ<sup>1</sup> ՎՐԱ<sup>1</sup>

6. ԳԹԱՌԱՏ ՋԵՐՄԵՌԱՆ ԴՈՒԹՅԱՆ<sup>1</sup> ՆԵՐՔՈ<sup>1</sup>:

**Ծանոթություն.** Երկրորդ տողում պահպանվել է միայն մի տառ՝ բառակցքի «սին» (س)՝ «Ս», որից էլ պայմանականորեն վերականգնել ենք ՍՈՒԼԵՅՄԱՆ: Այն մահացողի անունը կամ հայրանուն է եղել: Ինչ վերաբերում է տապանաքարի ժամանակին, ապա դժվար է որևէ կարծիք հայտնել: Չորրորդ տողում պահպանված են թվականի միայն երկու թվերը՝ 18: Քիչ հավանական է, որ այն եռանիշ տարեթվի սկզբնամաս լինի՝ հարյուր ութսուն, քանի որ ընկնում է VIII դ. վերջ: Հիշյալ ժամանակում թվականները գրվում էին գլխավորապես տառերով: Ավելի հակված ենք կարծելու, որ այն եռանիշ մեծ կամ քառանիշ փոքր թվի վերջնամաս է՝ տասնութ: Այս դեպքում արձանագրությունը թվագրվում է XVI-XVII դդ.:

Արքայական դամբարանի հուշարձանախումբն ուսումնասիրող Հ. Սիմոնյանը գրում է, որ «1688-1830 թթ. միջակայքում, նախքան Թուրքմենշայի պայմանագրով Հյուսիսային Հայաստանի ռուսական կայսրության կազմում ընդգրկումը, Աղցքում տեղի են ունենում մեզ անհայտ իրադարձություններ, որոնց արդյունքում գյուղը հայաթափվում է: Արդեն 1844 թ. գյուղի հուշարձանների առաջին հետազոտողի Հ. Շահխաթունյանցի վկայությամբ Աղցքի բնակչությունը բաղկացած էր 9 տուն մահմեդականներից»<sup>1</sup>: Արդ, ննջեցյալն այն մահմեդականներից է, որոնք Աղցքում հաստատվել են գյուղի հայաթափումից հետո:

Ահա սրանք են Աղցքի՝ մեր կողմից ներկայացվող նորահայտ վիմագրերը, որոնք թեև փոքրածավալ են և ոչ ամբողջական, բայց բավականին խոսուն են ու բավականաչափ տարողունակ՝ տեղեկություններ պարունակելու առումով:

**ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ ԱՂՑՔԻՑ**

*Աշոտ Մանուչարյան*

**Բանալի բառեր՝** Արագածոտն, Աղցք, դամբարան, Արշակունի, թագավոր, վիմագիր, քանդակ, վերականգնում, թվական, գավառ:

Արագածոտնի մարզի Աղցք գյուղը հայտնի է Արշակունի թագավորների (52-428) դամբարանով՝ հիմնադրված 364 թ.: Դամբարանի հարևանությամբ գտնվում են IV-V դդ. եկեղեցու ավերակներ: Հուշարձանի տարածքից մեր կողմից ընդօրինակվել են ութ արձանագրությունների բեկորներ, որոնցից մեկը՝ արաբատառ:

<sup>1</sup> Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 9:



Նախկինում դրանցից հրատարակվել է երկուսը: Չնայած այն բանին, որ նորահայտ վիմագրերը հատվածային են, դրանք պարունակում են խոսուն տեղեկություններ:

### НОВЫЕ ЛАПИДАРНЫЕ НАДПИСИ ИЗ АХЦКА

*Ashot Manucharyan*

**Ключевые слова:** *Арагацотн, Ахцк, гробница, Аршакуни, царь, лапидарная надпись, разрез, восстановление, дата, провинция.*

Село Ахцк Арагацотской области известно гробницей царей Аршакуни (52-428), основанной в 364 г. По соседству с гробницей находятся развалины церкви IV-V в. Из территории памятника нами были скопированы фрагменты 8-и лапидарных надписей, из которых один с арабскими буквами. Ранее были опубликованы две надписи. Несмотря на то, что новонайденные надписи отрывочные, они содержат существенные информации.

### NEW INSCRIPTIONS FROM AGHTZK

*Ashot Manucharyan*

**Keywords:** *Aragatsotn, Aghtzk, mausoleum, Arshakuni kings, inscription, sculpture, restoration, date, province.*

The village of Aghtzk in Aragatsotn region was founded 364. It is known for the mausoleum of Arsakid kings (52-428). Nearby the mausoleum the ruins of the IV-V cc church lay in ruins. Eight details of inscriptions from the territory have been copied by us. Two of them were published previously and one of them in Arabic letters has been published by us.

Although the preserved inscriptions are on separate parts they transfer complete and token information.